

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Մաղաթեյանի շնորհավորական ուղերձը Մահմանադրության օրվա կապակցությամբ

04.07.2018



Մի րեկի՛ հայրենակիցներ:

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Մահմանադրության օրվա կապակցությամբ:

Մահմանադրությունը պետության մայր օրենքն է, որը սահմանում է երկրի քաղաքական, իրավական, տնտեսական հիմունքները և հանդիսանում է քաղաքացիական համերաշխության, օրինականության ու կայունության հիմնական երաշխիքը: Այն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

1995 թվականի հուլիսի 5-ին, Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ, համաժողովրդական քվեարկությամբ ընդունվեց Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը: Այդ օրը հայ ժողովուրդն ընտրեց իր երկրի կայացման գլխավոր փաստաթուղթը, որով ամրագրվեց Հայաստանի Հանրապետության ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն լինելու փաստը: Մահմանադրությունը յուրաքանչյուր պետության իրավական հիմնաքարն ու պետականության ապահովման հիմնակառույցը:

Հարգելիներ՛ս, ևս մեկ անգամ շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Մահմանադրության օրվա կապակցությամբ: Մաղթում եմ, որ բոլորս հարգենք ՀՀ Մահմանադրությունն ու օրենքները, անվերապահորեն ենթարկվենք օրենքների պահանջներին, ամրապնդելով Հայոց անկախ պետականության հիմքեր